



ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման
ֆակուլտետի դեկան

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱԽՏՈՐՈՇՄԱՆ ԵՎ
ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՐՈՇ
ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ¹**

Հիմնաբառեր. սահմանադրականություն, շուկայական կառուցակարգեր, զարգացող երկրներ, սահմանադրական դրույթներ, մշտադիտարկում

Շուկայական կառուցակարգերի լիարժեք և արդյունավետ գործունեության ապահովումն անհնար է իրագործել առանց հաշվի առնելու այն օրենսդրական և սահմանադրական միջավայրը, որտեղ իրականացվում է հասարակության կենսագործունեությունը: Այս ամենից հետևում է, որ սահմանադրաիրավական կարգավորման օբյեկտը և առարկա կարող են հանդիսանալ տնտեսությունն ու տնտեսական հարաբերությունները, որոնց ուսումնասիրությունն ու արդյունավետ լուծումների առաջադրումը կարող են իրականացվել սահմանադրականության մակարդակի գնահատման, մշտադիտարկման ու կառավարման հիմքի վրա:

Սահմանադրականության խնդիրների ուսումնասիրությունն ու դրանց վերաբերյալ արդյունավետ լուծումների առաջադրումը հատկապես կարևոր են զարգացող և անցումային երկրների համար, որտեղ մեծ է խզումը հոչակված սահմանադրական դրույթների և գործող կանոնների միջև:

Այսօր տնտեսության կառավարման ու կարգավորման ինստիտուտների անբավարար գործառնումը գերիշխող է դարձնում հակաշուկայական ուժերի ազդեցությունը, որի դրսևորումն է նաև քաղաքական – տնտեսական – վարչական ներուժի սերտացումը:

¹ Զեկույցը թիմային հետազոտության արդյունք է, որին իրենց մասնակցությունն են բերել տեխ. գիտ. դոկտոր, պրոֆ. Ա. Հ. Առաքելյանը, տնտ. գիտ. դոկտոր, դոցենտ Ռ. Ա. Գևորգյանը, դոցենտներ Գ. Պ. Տոնոյանը, Ն. Ս. Քոչինյանը, Գ. Մ. Ղուկասյանը, ասպիրանտներ Ժ. Ս. Մխիթարյանը, Ս. Ս. Նահապետյանը, որոնք իրենց ուսումնասիրություններն իրականացնում են ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնի հետազոտական ծրագրերի շրջանակում: Զեկույցը ներկայացվել է նաև ՀՀ Սահմանադրական դատարանի, Վենետիկի հանձնաժողովի, Նոր ժողովրդավարության երկրների սահմանադրական վերահսկողության մարմինների կոնֆերանսին, ՀՀ Սահմանադրական իրավունքի կենտրոնի կազմակերպած՝ 2016 թ. հոկտեմբերի 20-23-ի երևանյան միջազգային խորհրդաժողովին:

Սրանք խնդիրներ են, որոնց արդյունավետ լուծումները պետք է փնտրել սահմանադրականության բավարար մակարդակն ապահովող իրավակարգավորումների մեջ:

Հայաստանն ընտրել է գիտելիքահենք տնտեսության զարգացման ճանապարհը: Այդ ուղղությամբ բավական շատ աշխատանքներ են իրականացվել հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների, որոշ չափով էլ՝ բնագիտության ոլորտներում:

Վերջին տարիներին մեծ թափով աճում են միջգիտակարգային հետազոտությունների ծավալները: Սահմանադրական տնտեսագիտությունը դրա ամենահայտնի օրինակներից է, որի իրականացման համար ընդգրկվում են տնտեսագետներ, իրավագետներ, մաթեմատիկոսներ, սոցիոլոգներ, հոգեբաններ և այլ մասնագետներ: Թերևս, հենց այդ պատճառով է, որ Սահմանադրական տնտեսագիտության կենտրոն ստեղծվել է ԵՊՀ-ում, որտեղ գործունեություն են ծավալում վերը նշված բոլոր ոլորտների բարձրակարգ մասնագետներ:

2016 թ. հոկտեմբերի 20-23-ը Երևանում անցկացվեց Երևանյան միջազգային խորհրդաժողով, որի թեմաներից մեկն էր «Վենետիկի հանձնաժողովի 106-րդ լիազումար նիստում ընդունված՝ «Իրավունքի գերակայության հսկիչ ցանկի» դերը և նշանակությունը համակարգային սահմանադրական մշտադիտարկման իրականացման գործում»: Գիտաժողովին մասնակցում էին Եվրոպայի խորհրդի, շուրջ չորս տասնյակ երկրների սահմանադրական դատարանների ներկայացուցիչներ և գիտնականներ:

Գիտաժողովում հռչակվեց, որ սահմանադրական մշտադիտարկումը և ավստրոշումը կարևորագույն խնդիրներ են եվրոպական բոլոր երկրների համար, ներկայացվեց դրանց իրականացման տարբեր մեթոդների և գործընթացների մշակման անհրաժեշտությունը, միաժամանակ, հատկանշվեց Հայաստանի առանցքային դերն այս գործում: Պատահական չէ, որ այդ հեղինակավոր գիտաժողովի արդյունքներից մեկը «Սահմանադրական մշակույթ միջազգային վերլուծական կենտրոն» հիմնադրամի ստեղծումն է Հայաստանում: Այդ հիմնադրամի համահիմնադիրներից է նաև ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետում գործող Սահմանադրական տնտեսագիտության գիտավերլուծական կենտրոնը:

Ընդ որում, ծրագրվում է դրա հենքի վրա ստեղծել Սահմանադրական տնտեսագիտության գերազանցության կենտրոն՝ իբրև սահմանադրական մշտադիտարկման մեթոդաբանության և գործիքակազմի մշակման հիմնական կատարող: Առաջադրվող մեթոդները պետք է լինեն առավելագույնս ունիֆիկացված, որպեսզի հնարավոր լինի դրանք մշտապես կիրառել տարբեր երկրներում՝ միաժամանակ հաշվի առնելով անցումային երկրների առանձնահատկությունները:

Մշտադիտարկումների արդյունքում նախատեսվում է ստեղծել տվյալների բազաներ և, համագործակցելով տարբեր երկրների հետազոտական կենտրոնների հետ, իրականացնել վերլուծություններ ու մշակել առաջարկությունների փաթեթներ երկրների կայուն զարգացման հայեցակարգային խնդիրների լուծման համար:

Խնդրի արդիականությունը: Վերջին տասնամյակներում *սահմանադրական տնտեսագիտությունը* արագ զարգացող ուղղություններից է: Աշխարհի առաջատար մի շարք համալսարաններ ակտիվորեն զբաղվում են *սահմանադրական դրույթների* և *տնտեսական ցուցանիշների միջև առկա փոխկապվածության* ուսումնասիրություններով: Այդ մասին են վկայում բազմաթիվ հրապարակումները, մասնագիտացված ամսագրերը (Constitutional Political Economy¹), ինչպես նաև միջազգային լայնածավալ մասնագիտացված տվյալների բազաների ստեղծման ծրագրերը²: Համոզված ենք, որ հետազոտություններին նոր լիցք կհաղորդի Վենետիկի հանձնաժողովի մշակած՝ իրավունքի գերակայության հսկիչ ցանկը³, որը թույլ կտա կատարել համապարփակ վերլուծություններ ու կանխատեսումներ իրավական, ժողովրդավարական, սոցիալ-տնտեսական զարգացումների ու դրանց կառավարման առումով:

Վերջին տարիներին հատկապես միջգիտակարգային բնույթի հետազոտությունները ցույց են տալիս, որ շուկայական կառուցակարգերի լիարժեք և արդյունավետ գործունեության ապահովումն անհնար է իրագործել առանց հաշվի առնելու այն օրենսդրական և սահմանադրական միջավայրը, որտեղ իրականացվում է հասարակության կենսագործունեությունը: Այս ամենից հետևում է, որ սահմանադրաիրավական կարգավորման օբյեկտ և առարկա կարող են հանդիսանալ տնտեսությունն ու տնտեսական հարաբերությունները, որոնց ուսումնասիրությունն ու արդյունավետ լուծումների առաջադրումը կարող են իրականացվել սահմանադրականության մակարդակի գնահատման, մշտադիտարկման ու կառավարման հիմքի վրա: Վերջին եզրահանգմանը գալիս ենք Նոբելյան մրցանակի դափնեկիր Զ. Բյուքենենի տեսության հիման վրա⁴:

Գլխավ առումով, սահմանադրականության բարձր մակարդակն աշխարհի եզակի երկրներին է բնորոշ: Մի շարք երկրներում *սահմանադրականության պակասությունը* և *անհարթությունները* մեծ չափեր են ընդունել, ինչն իր դրսևորումն է գտնում հասարակական կյանքի ամենատարբեր բնագավառներում, մասնավորապես՝ սոցիալ-տնտեսական զարգացման արգելակմամբ:

Սահմանադրականության խնդիրների ուսումնասիրությունն ու դրանց վերաբերյալ արդյունավետ լուծումների առաջադրումը հատկապես կարևոր են զարգացող և անցումային երկրների համար, որտեղ մեծ է խզումը սահմանադրական դրույթների և գործող կանոնների միջև: Ժամանակակից պայմաններում *տնտեսական ճշգրիտ քաղաքականության ընտրությունը մեծապես կախված է սահմանադրականության պակասությունից (խզման աստիճանից), դրա կազմի ու կառուցվածքի, տնտեսության վրա դրա ազդեցության փոխանցումային մեխանիզմների բացահայտումից, ինչպես նաև «գործառույթ – ինստիտուցիոնալ»*

¹ <http://link.springer.com/journal/10602>

² Comparative Constitutions Project's (CCP), Available at: <http://www.comparativeconstitutionsproject.org>

³ Տե՛ս «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողով, զեկույց CDL – AD (2016)007, Ստրասբուրգ, 18-ը մարտի, 2016 թ.:

⁴ Buchanan, James, M., (1990) The Domain of Constitutional Economics, Constitutional Political Economy, Vol. 1, No. 1, p. 49.



լիազորություն - պատասխանատվություն» գործառույթային ու կառուցակարգային ողջ շղթայի օղակներում օպտիմալ կառավարման համակարգի ներդրումից:

Այսօր տնտեսության կառավարման ու կարգավորման ինստիտուտների անբավարար գործառնումը գերիշխող է դարձնում հակաշուկայական ուժերի ազդեցությունը, որի դրսևորումն է նաև քաղաքական – տնտեսական – վարչական ներուժի սերտացումը: Սրանք խնդիրներ են, որոնց արդյունավետ լուծումները պետք է փնտրել սահմանադրականության բավարար մակարդակն ապահովող իրավակարգավորումների մեջ:

Սահմանադրական տնտեսագիտության ոլորտում խնդիրների համակողմանի հետազոտումը և այդ հետազոտությունների առավել համակարգված ձևով իրականացումը հնարավոր է համապատասխան ինստիտուցիոնալ լուծումներով:

Սահմանադրական տնտեսագիտության հիմնական գաղափարի ու նպատակադրումների մասին պատկերացումների շրջանակում տեղին է մեջբերել իսլանդացի տնտեսագետ Թրայն Էգերսթոնի «Քուզի թեորեմի ընդհանրացումը», ըստ որի՝ տնտեսական աճը և երկրի զարգացումը հիմնականում կախված չեն գոյություն ունեցող կառավարության տիպից, եթե գործարքային ծախսերը տնտեսական և քաղաքական ասպարեզում հավասար են գրոյի: Եթե գործարքային ծախսերը դրական են, ապա իշխանության բաշխումը երկրի ներսում և նրա իրավաստեղծ կազմակերպությունների ինստիտուցիոնալ կառուցվածքը դրա զարգացման կարևորագույն գործոններն են:

Նոր ինստիտուցիոնալիզմի դրույթներից ելնելով՝ նշենք, որ գործարքային, այլ կերպ ասած, գործառնական վերադիր կամ փոխաբերական իմաստով՝ անհարթություններով պայմանավորված շփման ուժի հաղթահարման ծախսերը տնտեսական և քաղաքական ոլորտներում ունեն մի շարք բաղադրիչներ: Դրանք առաջանում են շուկայում (շուկայական գործարքային ծախսեր), կազմակերպություններում (կառավարչական ծախսեր) և կառավարության մակարդակում (քաղաքական գործարքային ծախսեր)¹:

Ըստ էության, սահմանադրականության աստիճանի որոշարկման հիմնախնդիրն նվիրված տեսական-գործնական հետազոտություններն իրենց բնորոշ հասկացությունների ապարատով ու մեթոդաբանությամբ բազմազան են՝ կախված ձևակերպված նկատառումներից: Ստեղծարար Էկոնոմիկայի տեսանկյունից, դրանցում առանձնանում են տեսական-խաղային, էկոնոմետրիկ մոդելները: Ըստ այդ մոտեցումներից մեկի՝ Տ. Աճեմօղլուն և Ջ. Ռոբինսոնն իրենց «Իշխանության, էլիտաների և ինստիտուտների կենսունակությունը» վերնագրով հոդվածում² ցույց են տալիս կայուն հավասարակշիռ վիճակի գոյության հնարավորությունը, որն, ի դեպ, վերահաստատեց պրոֆ. Գ. Հարությունյանը Երևանյան միջազգային խորհրդաժողովում ներկայացրած հայեցակարգային դոկտրինում:

¹ Տե՛ս Սարգսյան Հ., Մարկոսյան Ա., Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները: Ընդլայնված ամփոփում, Եր.: «Ձանգակ» հրատ., 2014, էջ 70:

² Տե՛ս Daron Acemoglu, and Robinson, James A., “Persistence of Power, Elites and Institutions,” American Economic Review, 98 (1), 2009, էջ 267-293:



S. Աջեմօղլուի հոդվածում (տե՛ս հղումը) De jure և De facto քաղաքական իշխանությունների գործառնան հարաբերակցությունը ներկայացվում է հետևյալ կերպ.

- De jure՝ քաղաքական իշխանությունը պայմանավորվում է պաշտոնական քաղաքական ինստիտուտներով (**սահմանադրություն**):
- De facto՝ քաղաքական իշխանությունը որոշվում է առանձին խմբերի կազմակերպություններով և հավասարակշիռ ներդրումներով՝ ուղղված De facto քաղաքական իշխանություն ստեղծելուն և պահպանելուն:
- Ենթադրվում է, որ երկիրը կարող է գտնվել երկու իրավիճակում՝ «ժողովրդավարական» և «ոչ ժողովրդավարական», ինչպես նաև, որ գոյություն ունեն երկու տիպի խաղացողներ՝ «ժողովուրդ» և «վերնախավ (էլիտա)», որի պարագայում «ժողովրդավարական» իրավիճակում ժողովուրդը հնարավորություն ունի ավելի մեծ ազդեցություն ունենալու De jure քաղաքական իշխանության վրա:

Ուսումնասիրության որոշակի արդյունքներն են.

- Ինստիտուտների ազդեցությունը երկրի տնտեսական արդյունքների (economic outcome) վրա կախված է de jure և de facto քաղաքական իշխանությունների փոխհարաբերություններից:
- De facto քաղաքական իշխանությունը հաճախ ավելի կարևոր դեր ունի տնտեսական քաղաքականության և ռեսուրսների բաշխումը սահմանելու հարցում, քան ինստիտուտները:
- De facto քաղաքական իշխանությունը պատկանում է որոշակի խմբերին՝ որպես «զոռբայության» արդյունք (possessed by groups as a result of their wealth, weapons, or ability to solve the collective action problem):
- De jure քաղաքական իշխանության փոփոխությունը կամ ռեֆորմները բերում են de facto քաղաքական իշխանության բաշխման վերադասավորման՝ չեզոքացնելով ռեֆորմների ազդեցությունը:
- Վերնախավից կարող է ավելի շատ ներդրումներ պահանջվել de facto քաղաքական իշխանություն ունենալու համար «ժողովրդավարության» պայմաններում, քան դրա բացակայության դեպքում:
- Որոշակի պայմանների դեպքում քաղաքական ինստիտուտները կարող են ակտիվորեն փոփոխվել, մինչդեռ տնտեսական ինստիտուտները՝ գոյատևել երկար ժամանակ:

Ժողովրդավարությունը կարող է լինել կայուն և երկար ժամանակ գոյություն ունենալ, մինչդեռ տնտեսական ինստիտուտները գործում են առավելապես վերնախավի համար: Ավելին, վերնախավին աջակցող ինստիտուտների գոյության հավանականությունն ավելի մեծ է «ժողովրդավարության», քան դրա բացակայության դեպքում: Այս իրավիճակը հեղինակներն անվանել են «բռնագրավված ժողովրդավարություն» (Captured Democracy):

Այսպիսի կայուն, հավասարակշիռ վիճակի գոյության հնարավորության բացահայտումը հեղինակների հետազոտության գլխավոր արդյունքն է:



Սահմանադրականության մակարդակի գնահատումը սահմանադրական ախտորոշման համատեքստում:

Սահմանադրականության գնահատումը կարելի է ներկայացնել որպես գոյություն ունեցող անհարթությունների, սահմանադրականության պակասուրդի ու ծախողումների չափի ճշգրտմանը միտված գործընթաց, որի հիման վրա իրականացվում են իրավատնտեսական գործընթացների մշտադիտարկումն ու կառավարումը:

Սահմանադրականացման գործընթացը, սկզբնավորվելով սահմանադրականության մակարդակի գնահատմամբ, չափմամբ, վերջնարդյունքում դրա կառավարմանն ուղղված համալուծ հիմնախնդիրների լուծումների վերաբերյալ գիտամեթոդական մոտեցումների ամբողջությունն է:

Սահմանադրականության գնահատման **առաջարկվող մոտեցումներից** է դրա իրականացումն իրավական պետության, ժողովրդավարական և սոցիալ-տնտեսական ցուցանիշների համախմբի միջոցով¹: Այս երեք հենասյուներն ընդունվել են որպես սահմանադրականության գնահատման ցուցչակազմի ձևավորման հիմք: Յուրաքանչյուրի գծով մեր կողմից **պայմանականորեն** դիտարկվել են հետևյալ ցուցանիշները.

Հենասյուն 1. Իրավական պետություն

- Ա. իրավական ցուցիչ
- Բ. կոռուպցիա
- Գ. սեփականության իրավունք:

Հենասյուն 2. Ժողովրդավարություն

- Դ. ընտրական գործընթաց
- Ե. արտահայտման և համոզմունքների ազատություն
- Զ. քաղաքացիական հասարակության մասնակցություն:

Հենասյուն 3. Սոցիալ-տնտեսական

- Է. Մարդկային զարգացման մակարդակ (մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի, բնակչության կրթական և առողջապահական մակարդակների ինտեգրալ ցուցանիշ է):
- Ը. Զինիի գործակից (դիտարկվել է 100-ից հանած արժեքը):

Ցուցչակազմի պայմանականությունը նրանում է, որ յուրաքանչյուր երկրի սահմանադրություն կարող է պարունակել քաղաքական-քաղաքացիական, սոցիալ-տնտեսական իրավունքների, իշխանության թևերի տարանջատման ու գործունեության հարյուրավոր նորմեր, դրույթներ: Ցուցչակազմում որոշակի նորմերի առանձնացումն իրականացվում է կոնկրետ նպատակներով, հստակ չափանիշների նախանշումով, որով ձևավորվում է հետազոտության դիպաշարը (սցենարը):

¹ Հարությունյան Գ., Սահմանադրական մշտադիտարկում, Երևան, Նժար, 2016, էջ 90-92: